

լէմքեարեանի սրբազրութիւնն ըստ դերմաներէն թարգմանութեան ծան. 126-ի: Եւ վերջապէս Ա. Ա. Աբրահամեանը Եզնիկի իր արեւելահայերէն թարգմանութեան մէջ ընդունել է [ի] հիւղեայն եւ ծան. 51-ում յիշեցրել միայն Հր. Աճառեանին, «մոռանալով» Գր. Գալէմքեարեանին: Հաւանաբար սա է Վ. Առաքելեանի տեղեկութեան միակ աղբիւրը, ինչպէս այլ դիտողութիւններէ ժամանակ էլ ենք նկատել: Իսկ ինչ վերաբերում է բուն սրբազրութեանը՝ [ի] հիւղեայն, բացառական, մինչդեռ Վ. Առաքելեանը հիւղեայնը հաւանաբար համարում է լեալ իցէ ստորոգեալի սեռական հոլովով ենթական, կարծում ենք, որ իրաւացի են եղել այն առաջարկող բանասէրները, եւ գոնէ այս անգամ Վ. Առաքելեանը ակամայ բացայտում է, որ ոչինչ չի հասկացել Եզնիկի այդ պարբերութիւնից: Հակառակ նրա մեկնաբանութեանը, որ սխալ է, Եզնիկն այնտեղ քննում է հետեւեալը. «Դարձեալ հարցցուք զհիւղեայն. պա՞րզ ինչ բնութիւն իցէ, եթէ յաւուրածով» (1959, էջ 19, տ. 21-22 = Վ 32.11-13): Նրա տրամաբանութեան առաջին օղակը հետեւեալն է. եթէ հիւղէն պարզ բնութիւն է եւ մենակերպ, եւ (եթէ) աշխարհս, որ հիւղէից է կաղմուած (ինչպէս ասում են հակառակորդները), հաստատուած է յօղուածոներից եւ խոնուածքներից, ապա անհնարին է ասել, թէ աշխարհս զոյացել է («լեալ իցէ») հիւղէից («[ի] հիւղեայն»), որ պարզ բնութիւն են համարում: Այսպիսի դատողութեամբ Եզնիկի ենթադրութիւնն-նախադրեալից հնարաւոր չէ տրամաբանօրէն եզրակացնել հիւղէի չզոյուութիւնը, որ պնդում է Վ. Առաքելեանը, այն է՝ «հիւղը չի եղել»: Եզնիկի երկը փիլիսոփայօրէն ուսումնասիրած, Մատենադարանի տնօրէն փիլիսոփայ Սեն Արեւշատեանը մեզ հետ համաձայն կը լինի, որ Եզնիկը չի ժըխտում հիւղէի գոյութիւնը, որպէս Աստուծոյ ստեղծածը, այլ ժըխտում է հիւղէի համազոյակցութիւնը ի յաւիտենից Աստուծոյ հետ, ինքնուրոյնաբար:

29. էջ 202. «Եզնիկը գրում է³⁶. Նոյնպէս եւ գերկիր սեղմացեալ տեսանեմք եւ բարձեալ բերէ զհրաման հրամանատուին. եւ

³⁶ Ըստ Ձեռ-ի, թէ ըստ Վ-ի. պարբերութեան վերջում կարգում ենք. «Այս բառը ունի նաեւ նարեկացին (Եզն., Վ., 40)». չա՞տ է յստակ:

զայլսն ամենայն համակերտս ծառայացեալս հրամանաց արարչին: Այս համակերտ բառը Եղիշէ Դուրեանը դարձրել է համակերպ³⁷, որ նոր թարգմանութեան մէջ³⁸ դարձել է նոյն կերպ: Նախ Եզնիկը այդքան անխելք չէր, որ Երկինքը, երկիրը, ուղտը, լուսն եւ ստեղծուած այլ զոյացութիւններ նոյնանման անուանէր. նա, համակերտ ասելով, հասկանում է բարեյարմար ստեղծուած, եւ նախադասութեան իմաստն էլ հենց այդ է: Այս բառը ունի նաեւ նարեկացին³⁹ (Եզն., Վ., 40): Յօղուածազրի հեղեանքը Ա. Ա. Աբրահամեանի (այժմ հանդուցեալ) նոյն կերպի քերականական գործածութեան խեղաթիւրումն է. սա այս երկու բառերը գործածել է մակրայարար՝ «նոյն կերպ ծառայող միւս բոլոր արարածները...» (էջ 48), իսկ Վ. Առաքելեանը մեկնաբանում է «նոյնանման անուանէր»: Միւս կողմից համեմատենք համակերտ բառի նշի-ի «համեմատ կերտեալ. բարեյարմար» եւ Վ. Առաքելեանի տուած սահմանումները. ո՛ւմ էլ տրուի ժամանակազրական առաջնութիւնը, յամենայն դէպս արարչազորութեան մէջ չկան, ըստ Եզնիկի, «բարեյարմար ստեղծուած» եւ «անյարմար ստեղծուած» արարածներ, քանի որ նրա հիմնական դրոյթներից է՝ «Ձիք ինչ չար, որ բնութեամբ չար իցէ» (Վ 10): Բացի այդ, «մի ամբողջ նախադասութեան իմաստն էլ հենց այդ», այսինքն «բարեյարմար ստեղծուած» կամ մի ածականի համազօր լինել չի կարող, հակառակ Վ. Առաքելեանի ասածին: Սա 1931 թ. հրատարակած «Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան» գրքի էջ 126-ում այս նոյն նախադասութեան համակերտ բառի մասին գրել էր. «Մինչդեռ Եզնիկը ուղում է ասել միակերպ՝ միանման կերտուածները», որ զարմանալիօրէն «միանման» է դուրս գալիս Ա. Ա. Աբրահամեանի «նոր թարգմանութեան» նոյն կերպ-ին: Մենք կողմնակից ենք համակերպ[այ]ս «միջամտութեանը», բայց փաստարկուումն այստեղ երկար եւ անտեղի կը լինէր:

³⁷ Ձեռուած տեղում՝ Երկիր, Ձ, 408, կարգում ենք. «Համակե՞րտս թէ համակերպս. — երկրորդը աւելի բանաւոր կը համարինք». ուստի մեզմ ասուած:

³⁸ Այսինքն Ա. Ա. Աբրահամեանի արեւելահայերէն թարգմանութիւնը, Երեւան, 1970, էջ 48:

³⁹ Ինչպէս նաեւ Յակոբ Մծրնացին (ըստ ՆՃԻ-ի համակերտ բառայօղուածի), ի մեծ զարմացումն անտեղեկ ընթերցողի:

բ) ճիշտ համարուած միջամտութիւններ

«Սակայն, — գրել է Վ. Առաքելեանը, — արդար չի լինի չասել, որ բանասիրական ուղղումների մէջ կան այնպիսիք, որոնք ճիշտ են եւ տեղին» (էջ 202). եւ տուել է օրինակներ:

30. էջ 202. «Ձի մարմնաւորի չէ հմար, թէ ի ջուրս կեցցէ⁴⁰. մարմնաւորի առաջարկուած է փոխել ցամաքայնոյ». չնչուած տեղում՝ Ե. Դուրեան, Երկիր, Ձ, 411, ուղղումը — յօղով է՝ ցամաքայնոյն, որին մենք համաձայն չենք, որովհետեւ հնարաւոր չէր, որ մարմնաւորի բառը դրչութեան ժամանակ փոխարինած լինէր հեղինակային, իբր, ցամաքայնոյն բառին:

31. էջ 202. «Մարմնոց յոգնակի ձեւը առաջարկուած է եզակի՝ մարմնոց. իմաստը այդ է պահանջում». այսքան անյայտներով հաւասարում լուծելը կամ այս մարմնոցը Եզնիկի երկում ստուգապէս յայտնաբերելը եւ բան սովորելը անհնարին է, նոյնիսկ երկի համարաբարուով. ընթերցողը դիտարար չէ:

32. էջ 203. «Եզնիկն ունի. Ուստի յափշտակութիւնք սահմանաց եմ եւ գեղից եւ օտար քաղաքաց: Նորայր Բիւզանդացին առաջարկել է աւտարը ուղղել աւար: Միանգամայն ճիշտ է». Ձեռ — ունի (էջ 223ա) գեղից, բայց ոչ օ, այլ՝ աւ, ուստի եւ աւտար. իսկ Վ-ն (էջ 81) ունի գիւղից եւ օտար. պիտի յատակ իմանայինք, թէ Վ. Առաքելեանը ո՛ր աղբիւրից է ջուր խմում. չլինի՞ Ա. Ա. Աբրահամեանի ծան. 155-ից, ուր միւշտակուած են Նորայր Ն. Բիւզանդացու սրբազրութեան ստոյգ տեղը, որ անտիպ է, եւ Ձեռ-ի գեղիցը:

33. էջ 203. «Ձեռագիրը ունի տմարարիչ, ուղղուած է անարար ինչ». ո՛ւմ կողմից է ուղղուել. սակայն խնդիրն այն է, որ Ձեռ. 205բ-ն ունի անարարիչ (եւ ո՛չ՝ տմարարիչ). Ձմ-ի ձեռագիրն ունեցել է անարարիչ, որ իր սրբազրութեան մէջ անփոփոխ է թողել Գ.Տ.Յ.-ը. Ձմ-ի անարարիչ-ն անցել է Գ.Տ.Յ.-ին որպէս ղլխաբառ, իսկ Վ. Առաքելեանի բազմիցս պախարակած Ա. Բազրալեանի բազմիցս պախարակած Ա. Բազրալեանին իր աղբիւր Գ.Տ.Յ.-ի* անարարիչ-ն տուին իր աղբիւր Գ.Տ.Յ.-ի:

⁴⁰ Եթէ բնագիրն ըստ Ձեռ-ի է, ապա սա ունի կեցէ. էջ 231բ, իսկ կեցցէ «փոփոխութիւնը» Վ 99-ում է ըստ Գ.Տ.Յ.-ի:

աստղանիշով դրել էջակատում եւ բնագրում աստղանիշով սրբազրել է անարար ինչ*, եւ ուրիշներ զաղտնաբար հետեւել են նրան: Նոյնը պիտի ասենք նաեւ նրա հետեւեալ, ընդունուած սրբազրութեան մասին:

34. էջ 203. «Ձեռագիրը ունի. Ապա թէ ասիցեն, թէ հիւղն ի յԱստուած էր... պարտ էր խնդրել որպէս զատիչ ի նմանէ: Ձատիչ ուղղուած է գատ ինչ, որ ճիշտ է». Ձեռ. 197ա-ն ունի ապիցեն, բութ նշանով, ինչպէս ունի Վ 24, տ. 23-ը. Ձեռ. — ունի յաճ յապաւումը, այսինքն յԱստուած, առանց ի նախորդի, իսկ ի յԱստուած-ը, կրկնակի նախորդով, Վ-ինն է. Ձեռ. ն ունի յնդրել, միջակէտով, իսկ Վ-ն՝ յնդրել, բութ նշանով. այսպիսով Վ. Առաքելեանը ձգտում է միայն հաւատացնել, թէ Ձեռ. — ն է գործածել որպէս աղբիւր: Սակայն հիմնականն այն է, որ Ձեռ. — ը, Ձմ-ն եւ Գ.Տ.Յ. — ն ունեն գատիչ, իսկ Վ-ն կամ Ա. Բազրատուների՝ զա՞տ ինչ*⁴¹ բնագրում (աստղանիշով, իսկ տողատակում դարձեալ աստղանիշով* գատիչ), որ լուռ ընդունել են նաեւ ուրիշներ:

35. էջ 203. Վ 76-ի կամ Ձեռ. 221ա-ի հետեւեալ նախադասութիւնը կրկին մէջբերելիս Վ. Առաքելեանը գործել է վրիպակներ. գրել է՝ «Ես ոչ ընդ ձեր մահ կամէի եւ ոչ ընդ իշխանին՝ վատ խրատատուին անկանել». Ձեռ. — ու Վ-ն կամէի բառից յետոյ ունեն (,), իշխանին բառի վրայ բութ չունեն, եւ, ամենակարեւորը, ունեն խրատատուին, որ Վ. Առաքելեանը իր էջ 201-ում ճիշտ էր ընդօրինակել (տե՛ս մեր դիտ. 19): Նա աւելացրել է. «Այս նախադասութիւնը չհասկանալով, Ձմիւռնիայի հրատարակիչները փոխել, կամիմ բայի խնդրները դարձրել են հայցական», այն է՝ «Ես ո՛չ զձեր մահն կամէի, եւ ո՛չ ընդ իշխանութեամբ վատ խրատատուին անկանել» (Ձմ էջ 66): Նախ՝ Ձմ-ն մէկ հրատարակիչ է ունեցել՝ Յ. Նալեան: Ապա՝ հրատարակիչը կամէի բայի ընդ ձեր մահ եւ ընդ... անկանել երկու խնդրներից միայն առաջինն է դարձրել Գ- նախորդով ուղիղ խնդիր հայցական, եւ ոչ թէ լոկ «հայցական», քանի որ ընդ ձեր մահ բառակապակցութեան մէջ մահը նոյնպէս հայցական է, բայց ընդ նախորդով:

⁴¹ Եւ ոչ թէ առանց հարցականի գատ ինչ, ինչպէս յօղուածագիրն է գրել:

36. Էջ 203. Վ. Առաքելեանը իր նշած Վ 109-ից սխալներով է ընդօրինակել հետեւեալ նախադասութիւնը. գրել է՝ «Այլ յօժարեցոյց զկեսան լուսաւորաց երկիր պահանել եւ զայլս՝ օղոյ, հրոյ, երկրի, ջրոյ եւ հասակաց եւ փայտից եւ քարանց, մինչեւ օձից եւ զազանաց եւ ճճեաց անգամ»։ Վ-ն ունի զկէսսն՝ «պահանել, եւ զայլս» (ստորակէտով), եւ հրոյ, եւ ջրոյ, մինչեւ (ոչ եւ-ով)։ Բայց Վ. Առաքելեանի համար քանականը հետեւեալն է. «Մենք կարծում ենք Ձմիւռնիայի հրատարակութիւնը ճիշտ է արել, որ հասակաց ուղղել է⁴² հասկից, միայն պէտք էր ուղղել հասկաց։ Եւ այդպէս

«ԵՋՆԻԿԻ ԲՆԱԳՐԻ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ»

ԸՍՏ Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

37. Ընդունելով, թէ «Այն լեզուական թերութիւնները, որ առկայ են ձեռագրում, Եզնիկի լեզուին ու ոճին անյարիր լեզուական վրիպումներ են» (էջ 203), Վ. Առաքելեանը իր յօդուածի երրորդ մասում (էջ 203-206) առաջարկել է բնագրային «մի քանի սրբագրութիւններ», որոնցով ուղղում է «Յոյց տալ, — գրում է նա, — մեր կարծիքով այն ճիշտը, որ բնագիրը պէտք է ունենար, սակայն չունի» (էջ 203)։ Նա չի ասել, թէ այդ սրբագրութիւնները մի օր բնագրի⁴³ մէջ է մտցնելու յատուկ նշաններով, թէ թողնելու է ծանօթագրութիւնների բաժնում, որովհետեւ, ինչպէս ասել ենք, նա կարծում է, թէ «Եզնիկի ձեռագիրը մի անգամ սրբութեամբ, առանց միջամտութեան հրատարակելու ժամանակն է» (էջ 207)։ Նա ներկայացրել է 21 սրբագրութիւն (եւ վրէժ բառի իմաստի «ուղղում» [էջ 205] ի հակադրութիւն թաղ. թոռնեանի, որը բոլորովին անտեղի է բնագրային սրբագրութիւնների մէջ)։ Յօդուածի այս մասն ամենից կարեւորն ու օգտակարն է, սակայն այստեղ էլ Վ. Առաքելեանը նոյն ինքն է որպէս անփոյթ բանասէր, որ մէջ է բերում առանց չափերաների, առանց տեղերը նշելու (բացառութիւններով), վրիպակներով, առանց աղբիւրները, տեղերը եւ բանասէրների անունները յիշելու եւ այլն. նա անհաւասարակչիւ բանասէր է։ Ինչ վերա-

էլ է. հասկերը նոյնպէս պաշտամունքի առարկայ են եղել»։ ոչ մի փաստ, ոչ մի վրկայութիւն, ոչ մի աղբիւր, այլ՝ «Վարդապետն ասաց»։ Բացի այդ, հասկից կամ հասկաց ընթերցումը, մեր կարծիքով, համոզիչ չէ. նաեւ՝ ՆՃԲ-ն հասկ զոյականի յոգնակի սեռական-տրականը ներկայացնում է որպէս հասկաց կամ հասկից, սակայն երկրորդ ձեւի վրկայութիւնները դասական չեն, առաջինն էլ բոլորովին գուրկ է բնագրային վրկայութիւնից. այս զոյականի յոգնակի սեռական-տրականը չգտանք մեր տրամադրութեան տակ եղած համարաբառներում, եւ Վ. Առաքելեանը մեզ չի օգնել, այս հարցում էլ։

բերում է սրբագրութիւններին, ապա կան, որոնք համընկնում են, կան էլ, որոնք տարբերում են մեր սրբագրութիւններից. մի քանի խօսք տարբերություններից մի քանիսի մասին⁴⁴։

38. Էջ 203. «Մինչեւ գգրաստու քշնամւոյն անկանելոյ բեռամբ, չհրամայէ զանց առնել (Եզն., Վ., էջ 277)»։ այս հատուածում «Անկանելոյ անորոշ դերբայը որոշիչ է... գգրաստու ձեւի համար, որ դործիական հոլովով է կիրառուած. զանցառման խնդիր է։ Ուստի անկանելոյ ձեւը պէտք է ուղղել անկանելով»։ պատճառաբանութիւնը համոզիչ չէ, անորոշ դերբայը որոշիչ չի լինում։

39. Էջ 204. «Կամ առ սիրոյ սիրելոյ լինի, կամ առ անարժանս ինչ եւ զվաստ աշխարհոյ» (Վ 177). ըստ յօդուածագրի, «առ սիրոյ ուղղելի է առ սէր»։ պատճառը հաւանաբար այն է, որ «առ + հայցական» = հի-

⁴³ Կատարուած մի դէպք մեզ թելադրում է բերանբաց չլինել. 1970-ի աշնանը Երեւանի Երեմիի հարեւաններս դրականազէտ Պիոն Յակոբեանի եւ պատմաբան Հրաչիկ Բարթիկեանի հետ զրուցելիս բացայայտեցի Եզնիկի «հասակաց» (Վ 109) բառաձեւի մասին կարծիքս. «Պատմաբանասիրական հանդէս»-ի 1971 թ. 1, 194-195-ում մեծ զարմանքով կարդացի պատմածս (առանց իմ անուան) Հր. Բարթիկեանի «Եզնիկի երկի բնագրային մի մեկնաբանութեան առթիւ» յօդուածում։

⁴² Ամէն փոփոխութիւն դեռեւս ուղղում չէ։

մունքի կամ պատճառի պարագայ. բայց սա արտայայտում է նաեւ առ նախորդով ու տրականով, ինչպէս նոյն հատուածում՝ առ ... աշխարհոյ, կամ նոյն էջ 177.16-17-ում՝ առ ամփոփելոյ ... եւ անաչելոյ⁴⁴։

40. Էջ 205. «Բերենք մի այլ նախադասութիւն. Ձինչ չար քան զօձ կայցէ եւ ի նրմանէ թերիակէ եւ ի սպանող դեղոց (Եզն., Վ., էջ 63)։ Ի սպանող անիմաստ կապակցութիւն է։ Այդ ի-ն պէտք է ուղղել եւ կարգալ՝ եւ է սպանող դեղոց»։ Մենք էլ մեր հերթին Վ-ից մէջ բերենք այդ նոյն նախադասութիւնը, բայց իր հարազատ կէտադրութեամբ եւ, մանաւանդ, ամբողջութեամբ. «Ձինչ չար քան զօձ կայցէ, եւ ի նմանէ թերիակէ. եւ ի սպանող⁴⁵ դեղոց, որք ի նեմգութեմէ մարդկան կազմեցան, չեւ հասուցեալ եւ անդէմ բուժէ» (Վ 63.15-19)։ Մեր ընդգծածն էլ միասին կարգալով համոզում ենք, որ այնտեղ չիք «անիմաստ կապակցութիւն», ոչ էլ ի — է «սրբագրութեան» որեւէ անհրաժեշտութիւն. ի սպանող «անիմաստ կապակցութիւն»-ը պարզ է, քանի որ նրա ի-ն դեղոց բացառականի նախդիրն է, իսկ սպանող (կամ սպանող) դերբայը նրա նախադաս որոշիչն է։ Կիսատ, ըստ քմահաճոյքի հատուած ձեւով առաջարկուած այդ սրբագրութիւնը նման է «Իր քրթից հետու չտեսնել» խօսքին։

41. Էջ 205. «Եւ եւս յետոյ առաւել աստիք ... (Եզն., Վ., էջ 206-207)։ Աստիք բառը աղաւաղուած բառ չէ։ Այս բառը նշանակում է այս կողմերը (ժամանակի նշանակութեամբ) ... եւ եւս յետոյ առաւել այս ժամանակները՝ մեր ժամանակները, մօտիկ ժամանակները»։ Եթէ ճիշտ ենք ընկալում, աստիք-ը ժամանակի պարագայ է (յօդուածագիրը է թարգմանել նախադասութիւնը), սակայն ուղղական հոլովը այդ պաշտօնը չի ունենում։

42. Էջ 205. «... Առանձին ասելոյ (Եզն., Վ., էջ 261)։ Արոնցը առաջարկել է առանձին ասելոյ ուղղել առանց ինն ասելոյ։ Նա ձինն ասելոյ ուղղել առանց ինն ասելոյ», հաշուի չի առել մի շարք հանգամանքներ, որոնցից երրորդը, յօդուածագրի կարծիքով,

⁴⁴ Տե՛ս, օրինակ, Ա. Ա. Արբազան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 229։
⁴⁵ Այսպէս՝ — տառով Վ 1826-ում, իսկ — գրով Վ 1850 եւ Վ 1863 թթ. սպագիրներում։ Բայց սա էական չէ բնագրի իմաստի համար։

հետեւեալն է. «Եւ երրորդ՝ ինն ինչ հոլովով է դրուած, առանց կապը սեռական է պահանջում եւ օտար արթր բառը, որ հարուստ է գործածուած, առանց կապի խնդիր դարձնելով Եզնիկը հոլովել է եւ գործածել է սեռականով», այսինքն գրել է «առանց արթրն ասէ» (Վ 261)։ Մենք կողմնակից չենք Արոնցի սրբագրութեան, բայց ոչ էլ՝ Վ. Առաքելեանի տրամաբանութեան։ Ըստ Արոնցի, ինն (երեւի) ու տառի անուն է եւ հայցական է, իսկ ըստ յօդուածագրի՝ պէտք է սեռականով դրուած լինէր որպէս առանց կապի խնդիր, ինչպէս, իբր, արթրն։ Սա վերջինիս քերականական տարրական սխալն է. Եզնիկի «առանց արթրն ասէ»-ի մէջ, որ նշանակում է «առանց արթրի (յօդի) է ասում» (մի բան), արթրն բառաձեւն իրօք սեռական է որպէս առանց-ի խնդիր, բայց Արոնցի «առանց ինն ասելոյ» բառակապակցութեան մէջ սեռական հոլովով դրուած ասելոյն է առանց-ի խնդիրը, եւ ինն հայցական է, ասելոյ ներգործականի ուղիղ խնդիր՝ «առանց ինն ասելու»։

43. Էջ 206. «Եզնիկը գրել է. Նա եւ այլուստ եւս մարթեմ իմանալ (Եզն., Վ., էջ 61)։ Հրատարակիչները այլուստ մակբայը դարձրել են յայլուստ եւ այս ձեւով յայլուստ ոչ միայն բնագիր է մտել, այլեւ Եզնիկի անունով տեղ է գտել Հայկազեանում, ու նաեւ «Համարաբառում»։ Այլուստ հին բացառականը V դարում արդէն մակբայ էր եւ առանց յ-ի էր գործում։ Համեմատիւր. Այլուստ լինի օգնականութիւն եւ փրկութիւն հրէիցս (Եսթ. Գ 14)»։ Մենք յայլուստ սխալ դրչութեան պաշտպանը չենք, այլ պահանջում ենք անբասիր, ուղղամիտ բանասիրութիւն եւ ճշգրիտ տեղեկութիւններ։ ա) Եթէ Վ էջ 61-ի բնագիրն է մէջ բերում, ապա պէտք է ընդօրինակուէր «Նա եւ յայլուստ եւս մարթեմ իմանալ», եւ ոչ թէ Ձեռ. 214-ի այլուստ-ը։ բ) Սխալ է գրել՝ «հրատարակիչները», բոլորին նկատի ունենալով, քանի որ Վ-ի յայլուստ-ը գալիս է Գ.Տ.Յ. -ից, որ այն տեսել է Ձմ-ի ձեռագրում, իսկ Փ 1959-ի 31.9-ն ունի Ձեռ-ի այլուստ-ը. Լ. Մարիէսը եւ Շ. Մերսիէն հրատարակիչներ չէ՞ին։ գ) Յայլուստ-ը «Եզնիկի անունով» չէ, որ «տեղ է գտել Հայկազեանում», որն ունի «ԱՅԼՈՒՍՏ.ՅԱՅԼՈՒՍՏ» եւ «ՅԱՅԼՈՒՍՏ. տ. ԱՅԼՈՒՍՏ» գլխաբառերը. առաջինի վրկայութիւններն են՝ Եսթ. Գ 14 (որ կրկնել

է Վ. Առաքելեանը՝ չգտնելով ուրիշ դասական օրինակ, Աւետարանները չունեն) գրելով «այլուստ (կամ յայլուստ)», անանուն մի վկայութիւն այլուստ-ի, Սոր. Բ 61 (այլուստ) եւ, վերջապէս, Եզնիկի այս տեղը «այլուստ (կամ այլուստ)» ձեւով: Ինչո՞ւ փակութիւնը չյայտնել ընթերցողին. սա բնաւորութեան դիժ է, որ յիշեցնում «Ոճը մարդն իսկ է»:

44. Էջ 206. «Եզնիկը գրում է...» առանց էջի նշան բերում է մի նախադասութիւն, որի մէջ Վ 59-6-ն ունի «Ասեմք» բայը պարբերութեան սկզբում, որ չի երևում յօդուածագրի ընդօրինակութեան մէջ. նա ասում է. «Այս նախադասութիւնը ի՞նչ պակասութիւն ունի, որ երբեք-ից առաջ մի ասեմք է խցկուած». ո՞ւմ կողմից, ո՞ր տըպագրում՝ որոնելը ընթերցողին է թողնուած: Վ-ի այդ բառը գալիս է Գ.Տ.Յ.-ից, որ այն տեսել է Ջմ-ի ձեռագրում, իսկ Փ 1959-ում չկայ, որովհետեւ նրա հիմք Ջեռ-ում էլ չկայ:

45. Էջ 206. «Մենք մի աշխատութեան մէջ արգէն ցոյց ենք տուել, թէ ինչպէս բուրովին անվթար բառերը վթարուած ենք համարում. եւ ինքներս ենք վթարում: Այդպիսի մի բառ է երես, որ երեւացող է նշանակում», ըստ Ջեռ-ի (Եզնիկ, էջ 231բ. 6-7), միակէտ գրութեամբ եւ առանց Ե ու է գրերի գծագրային տարբերակման, երեսարարածից-է հատուածում, որը Վ 99-ում առ երես արարած իցէ է, ըստ Գ.Տ.Յ.-ի, եւ սրբագրութիւնների առարկայ է դարձել: Եթէ վերնագիրը չյայտնուած աշխատութիւնն է «Ակնարկներ հայոց գրական լեզուի պատմութեան» (Եր., 1891), ապա գրա էջ 125-ում Եզնիկի այդ երես բառն իր նախադասութեամբ իրրեւ օրինակ է բերուել (ուրիշների հետ) այն գրայթի համար, թէ «Անպարզութիւնը կարող է առաջանալ բառիմաստի մթաղնումից ու վերացումից»: Ինչպէս տեսնում ենք, այնտեղ բառավթարման մասին խօսք չկայ, եւ երես բառի մասին կարգում ենք. «Երես բառի տեսանելի հին

իմաստը մթաղնուել է, իսկ ժողովուրդը մինչեւ այսօր էլ պահպանել է հերես հէլավ (յայտնուեց, երեւաց)» (էջ 125): Երես-ի ածականական այս նշանակութիւնը բառարաններում չկայ իհարկէ. դուցէ հերես-ը = յերես «(դէպի) երեսը՝ մակերեսը», իսկ հէլավ = «ելաւ»: Յանկելի էր, որ Վ. Առաքելեանն աւելի մանրամասն բացատրէր այդ ժողովրդական խօսքը:

46. Էջ 206. Ջեռ. 231բ-ի «ծովացուղիով գործեաց» նախադասութեան բայը, ըստ Վ. Առաքելեանի, սկզբում պիտի եղած լինի կորգեաց. «Եզնիկը այս բայը երեք անգամ գործածել է այլ տեղերում եւ բոլորն էլ փախցնել նշանակութեամբ». բո՞ւն, թէ փոխարեքական իմաստով. այդ սրբագրութեան մէջ պէտք է նիւթական իմաստ ունենայ, ըստ յօդուածագրի բացատրութեան, սակայն նոյնը չի կարելի ասել հետեւեալ նախադասութեան մէջ նոյն բայի նշանակութեան մասին. «Այլ թէ սատանայ է, ասեն, գրգռիչ չարեաց, յայլս արարածոցն ընդէ՞ր մաղթէ դերկրպագութիւն հեթանոսութեան, եւ ոչ յինքն միայն կորգիցէ» (Վ 108-109). սրան յարմարագոյն են նշի-ում կորգեմ բային տրուած բացատրութիւնը՝ «ձգել յինքն» եւ հոմանիշները, որոնցից Վ. Առաքելեանը «քաղել»-ը դարձրել է «քաշել» եւ անտեսել է վերջինը՝ «ազատել», որ յարմար է Եզնիկի միւս երկու գործածութիւններին: Նշենք նաեւ, որ երեք կրօնագրութիւնների մէջ էլ այս բայն ունի յինքն հանդման ինդիքը, որ չկայ սրբագրուող նախադասութեան մէջ:

Մաղթում ենք, որ Վ. Առաքելեանն օգտուի Եզնիկի երկի միակ ձեռագրից եւ պատրաստի քննական մի բնագիր (եթէ արգէն իսկ չի պատրաստել) ու պետական հրատարակչութեան ընծայած դիւրութեան շքնորհիւ օր առաջ լոյս աշխարհ հանի տարիներ իր պրպտումների դիտական արգիւնքները ի վայելումն բոլորի:

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ
Վնեւի համալսարան

Հ. ԳՐԻԳՈՐ Վ. ՀԵՊՈՅԵԱՆԻ (1910—1985)
ԵՐԱՇՏԱԿԱՆ ԵՒ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ՝
1927—1984

ԳԱՀԻՐԷ (1952—1955)

Պէյրութ-Աղեքսանդրիա շոգենաւի ծովագնացութեան վերջ՝ Հ. Հէպոյեան հասած է Չորեքշաբթի, 1 Հոկտեմբեր 1952-ին Գահիրէ, զայն վերջնականապէս ձգելու համար՝ Հինգշաբթի, 28 Յուլիս 1955-ին: Մօտ երեք տարի մնացած է Եզնիկոսոս, որուն անտանելի տաքը մասնաւորապէս քաշել տուած է «Եզնիկոսոսի կլիմային անվարժ» Հ. Հէպոյեանին⁶¹⁶: «Կլիմայ» բառին նշանակութիւնը հասկնալու ենք բուն եւ փոխարեքական իմաստներով...: Գահիրէի մէջ առաջին օրուան յուշագրութիւնը յատկանշական է եւ լուսարանող՝ նկատմամբ Հ. Հէպոյեանին ունենալիք դպրոցական եւ հասարակական գործունէութեան այս երեք տարիներուն, նաեւ երաժիշտ եւ երգահան վարդապետին համար: Ան իբր N. B. կ'արտայայտուի այսպիսի բաց տողերով. «Կեանքի նոր անկիւնագարձ մը կը սկսիմ այս էջով — 1 Հոկտեմբեր 1952 — Եզնիկոսոս փոխադրուելով, ուր երբեք չէի ուզեր ապրիլ, տիրող դարձելի օդին, անհամ ջուրին, իսլամ կրօնին, մոլեռանդ տեղացիներուն զարշապիղձ ազտութեանց եւ վայրենի երգերուն պատճառաւ: Կը յուսամ, թէ տարի մը չի տեսեր այստեղի բնակութիւնս...: Ի՞նչ երջանիկ էի Պուլկարիա, ուր ապրեցայ 20 Հոկտեմբեր 1934-էն մինչեւ 18 Նոյեմբեր 1948⁶¹⁷: Ապա անցայ Պոլիս, ուր մնացի 3 շաբաթ եւ Դեկտեմբեր 10, 1948-ին Պէյրութ հասայ, ուր ապրեցայ մինչեւ 29 Սեպտեմբեր 1952»⁶¹⁸:

⁶¹⁶ Հ. Գր. Հ., ԱՅ., Ե. հտ., Երկուշաբթի, 6 Յուլիս 1953:

⁶¹⁷ «Մինչեւ կէսօր Պուլկարիոյ լուսանկարներու արկուած կարգի դնելով գրադեցայ: Կ'ընդգրկէ Պուլկարի 10 տարուան շրջանի կեանքս 1938—1948 դպրոցի աշակերտներով եւ բարեկամներով: Կեանք մը, որ դիւրաւ չի մոռցուիր...» (Հ. Գր. Հ., ԱՅ., Գ. հտ., Ուրբաթ, 15 Օգոստոս 1952):

⁶¹⁸ Նոյնը, անդ, Չորեքշաբթի, 1 Հոկտեմբեր 1952:

Այս աղամայ հոգեվիճակը, պաշտօնի յանկարծակահաս փոփոխումին աննպաստ դերը, նոր առաքելավայրին հանդէպ (տեղի-անտեղի) նախապաշարուածներու կարկառը, բաւականէն աւելի երկար որոշ ժամանակաշրջանի մը մարդուն եւ արուեստագէտին դօրաւոր տաղնապը (ներքին թնճուկներ ու միջավայրի իւրատումներ...) պատճառ եղած են, որ Հ. Հէպոյեան երաժիշտն ու երգահանը դառնայ գրեթէ ամուլ...: Այո՛, հակառակ «յուսահատ եւ անտրամադիր վայրկեաններ»ու⁶¹⁹ յաճախապէս գոյութեան՝ Մը-խիթարեան վարդապետը շարունակած է իր նախորդ երկու պաշտօնավայրերուն գործունէութիւնը, թէեւ ո՛չ նոյն քանակով, ո՛չ ալ նոյն որակով...: Յամենայն դէպս, իր դաստուութեամբ, կազմակերպած հանդէսներով, սաներու տուած դաշնակի եւ արորտէնի անհատական դասերով (1942—1953 ժամանակաշրջանի մէջ՝ 150 ձեռնադաշնակի աշակերտներ), պետական ռատիոյէն նուագային առանձնական ելոյթներով եւ յօդուածներով՝ ծանօթ մտաւորական, հասարակական գործիչ, երաժշտագէտ, երգահան եւ քննադատ Հ. Հէպոյեան ունեցաւ իւրայատուկ տեղը զահիրահայ կեանքին ներս:

Այս շրջանէն ձեռքս հասած երկերուն թիւը լիակատար չէ, ինչպէս ինձի կը թուի...:

1952

70 — Արի իմ Սոխակ, եռանուագ սրինգի (չութակի), թաւջութակի եւ դաշնակի համար, 28 Նոյեմբեր 1952, Գահիրէ, էջ 7:

Առանձին մեծադիր պրակ մըն է՝ հնամաշ եւ դունաթափ: Ենթախորադիրն է՝ Thema con 6 Variazioni, Trio-pour Violon, Violoncelle et Piano: Կարմիր զնդապրիչով

⁶¹⁹ Հ. Գր. Հ., ԱՅ., Ջ. հտ., Չորեքշաբթի, 30 Յունիս 1954: